Հավելված 2
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2022 թվականի մարտի 03-ի N74-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2022թ. մարտի 04-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33, 060 27 33 33 հեռախոսահամարներով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ,ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ

1.	ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ[1]	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ
1.1	**Հաշվի բացում**	
1.1.1	Ընթացիկ հաշիվ ֆիզիկական անձանց համար	
1.1.1.1	Բանկի մասնաճյուղերում և հեռավար նույնականացում անցած հաճախորդների հաշիվների (այդ թվում նաև խնայողական հաշիվների) բացման դեպքում[2]	2,000
1.1.1.2	ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդների դեպքում Բանկի մասնաճյուղերում հաշվի բացման կամ հեռավար նույնականացում անցած հաճախորդների հաշիվների (այդ թվում նաև խնայողական հաշիվների) բացման դեպքում	Առաջին հաշվի դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ, հաջորդ հաշիվները համաձայն 1.1.1.1 կետի
1.1.1.3	Առցանց եղանակով բացելու դեպքում	անվճար
1.1.1.4	Ավանդի ներդրման դեպքում ներդրվող ավանդի արժույթով և ՀՀ դրամով մեկական հաշիվ	անվճար
1.1.1.5	2.3 կետով սահմանված արտարժույթով փոխանցում իրականացնելու դեպքում փոխանցվող գումարի արժույթով մեկ հաշիվ	անվճար
1.1.1.6	Պարբերական դրամական վճարի հաշիվ	անվճար
1.2	**Հաշվի վերաբացում**	համաձայն 1.1 կետի
1.3	**Հաշվի** (այդ թվում նաև խնայողական հաշիվների) **տարեկան/ամսական սպասարկում**	
1.3.1	ՀՀ Ռեզիդենտ Ֆիզիկական անձանց համար ՀՀ ոչ ռեզիդենտ Ֆիզիկական անձանց համար	Անվճար 1,000 ՀՀ դրամ ամսական կամ 12 000 ՀՀ դրամ տարեկան

1 Սույն գլխի 1.1-1.5 կետերով նախատեսված սակագները չեն կիրառվում քարտային հաշիվների դեպքում:
2 Սակագինը չի կիրառվում պահատեղերի վարձակալությանը զուգահեռ ընթացիկ հաշվի բացման դեպքում:

1.3.2	Ակտիվ հաշվի համար հաճախորդի՝ Բանկում ունեցած բոլոր հաշիվներով մեկ տարվա ընթացքում գործառնություն չիրականացնելու դեպքում (այսուհետ՝ ոչ ակտիվ հաշիվներ) գործող տարեկան միջնորդավճար	5,000[3]
1.4	**Հաշվի փակում**	անվճար
1.5	**Հաշվի չնվազող մնացորդ**	չի սահմանվում
1.6	**Կանխիկ դրամական միջոցների մուտքագրում հաշիվներին[4]**	
1.6.1	Բանկի կողմից ընդունելի արժույթների համար	համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված սակագնի
1.6.2	500 եվրո անվանական արժեքով կանխիկ մուտքագրում հաշվին	1%
1.6.3	Դրամարկղի միջոցով ՀՀ դրամ արժույթով կանխիկ դրամի մուտքագրում մինչև 50,000 ՀՀ դրամը ներառյալ	200 ՀՀ դրամ[5]
1.6.4	Դրամարկղի միջոցով ՀՀ դրամ արժույթով կանխիկ դրամի մուտքագրում 50,000 ՀՀ դրամից ավելի	անվճար
1.7	**Կանխիկ գումարի տրամադրում/ելքագրում հաշվից[6]**	
1.7.1	Հաճախորդի հաշիվներինկանխիկ մուտքագրված գումարի սահմաններում՝ ՀՀ դրամով կամ արտարժույթով	Համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված սակագնի
1.7.2	Հաճախորդիհաշիվներին անկանխիկ, և Բանկի տարանցիկ հաշիվներին մուտքագրված գումարների դեպքում	Համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված սակագնի
1.7.3	Պարբերական դրամական վճարի համար բացված հաշվից	անվճար

[3] Սույն կետը տարածվում է այն հաճախորդների վրա, որոնք Բանկում ունեն միայն քարտային և ընթացիկ հաշիվներ, որոնցից որևէ մեկով մեկ տարի և ավել ժամանակահատվածում գործառնություններ չեն կատարվել և հաճախորդի բոլոր հաշիվների դրական մնացորդների հանրագումարը փոքր է 100,000 ՀՀ դրամից (կամ համարժեք արտարժույթից): Ընդ որում, գործառնություններ չեն համարվում հաշվի սպասարկման վճարի գանձումները կամ Բանկի կողմից իրականացված ներքին գործառնությունները, ինչպես նաև սառեցված հաշիվների միջոցները՝ սառեցված գումարի չափով: Սույն կետով նախատեսված միջնորդավճարը չի կիրառվում, եթե հաճախորդը Բանկում ոչ ակտիվ ընթացիկ և քարտից/քարտային հաշիվներից բացի ունի որևէ այլ Բանկային պրոդուկտ/ծառայություն՝ այդ թվում նաև սինքրոնացված Idram հավելված և/կամ idbanking.am առցանց համակարգ: Ոչ ակտիվ հաշիվների սպասարկման միջնորդավճարը կիրառվում է տարին մեկ անգամ՝ անկախ հաշիվների քանակից: Եթե ոչ ակտիվ հաշիվների մնացորդը փոքր է սահմանված միջնորդավճարից/համարժեք արտարժույթից, գանձվում է ամբողջ մնացորդային գումարը, որից հետո տվյալ հաշիվները կարող են փակվել Բանկի կողմից: Գանձված միջնորդավճարը վերադարձման ենթակա չէ:

[4] Նշված սակագինը չի կիրառվում ժամկետային ավանդների ներգրավման և վարկերի մարման նպատակով գումարների մուտքագրման դեպքերում:

[5] Սույն սակագինը չի գանձվում տերմինալի միջոցով գումարի մուտքագրման անհնարինության դեպքում: Սակագինը չի տարածվում արտոնյալ հաճախորդների դեպքում՝ վերջիններիս համար նախատեսված արտոնյալ սպասարկման սրահների դրամարկղի միջոցով կանխիկ դրամի մուտքագրման դեպքում:

[6] Կանխիկ գումարի տրամադրման միջնորդավճար չի գանձվում հաշիվներին առկա դրամական միջոցների դիմաց հաշվեգրված տոկոսագումարների կանխիկացումից: Բանկում ներդրված ավանդի գումարի կանխիկացման դեպքում նշված սակագինը կարող է կիրառվել բացառապես այն դեպքերում, երբ ավանդը ներդրվել է անկանխիկ մուտքագրված միջոցներից կամ անկանխիկ մուտքագրված գումարների կանխիկացման դեպքում կանխիկացման սակագինը չի կիրառվել, որի արդյունքում սպառվել է հաճախորդի հաշվին ձևավորած կանխիկ մուտքագրված միջոցների ընդհանուր սահմանաչափը: Բանկի կողմից տրամադրվող վարկերի գումարներից գանձվում են սույն մասով սահմանված սակագները, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ սակագին սահմանված չէ: Արագ դրամական փոխանցումների համակարգերով ստացված արտարժույթային գումարների դեպքում կանխիկի տրամադրման սակագինը սահմանված է սույն սակագնի 1.7.2 կետով՝ բացառությամբ MoneyGram, Intelexpress համակարգերի, որոնց դեպքում կանխիկի տրամադրումը անվճար է:

1.8	Էլեկտրոնային քաղվածքների և վճարային փաստաթղթերի տրամադրում	անվճար
1.9	**Քաղվածքների (1 հաշվի համար) տրամադրում**	
1.9.1	ՀՀ օրենսդրությամբ նախատեսված (առնվազն 30-օրյա պարբերականությամբ տրամադրվող) քաղվածքների դեպքում՝ առաջին անգամ	անվճար
1.9.2	Մեկից ավելի անգամ՝ մինչև 1 տարի վաղեմության ժամկետով տրամադրվող քաղվածքների դեպքում	500
1.9.3	Մեկից ավելի անգամ՝ 1 տարուց ավելի վաղեմության ժամկետով տրամադրվող քաղվածքների դեպքում	1,000
1.10	**Փաստաթղթերի և պայմանագրերի (1 փաստաթղթի համար) տրամադրում**	
1.10.1	Յուրաքանչյուր գործարքից հետո առաջին անգամ	անվճար
1.10.2	Մեկից ավելի անգամ՝ մինչև 1 տարի վաղեմության ժամկետով տրամադրվող փաստաթղթերի դեպքում	500
1.10.3	Մեկից ավելի անգամ՝ 1 տարուց ավելի վաղեմության ժամկետով տրամադրվող փաստաթղթերի դեպքում	1,000
1.11	**Դիմումի համաձայն ՀՀ դրամով և/կամ արտարժույթով հաշվի առկայության, մնացորդի, շարժի, վերաբերյալ տեղեկանքների տրամադրում**	
1.11.1	հայերենով	3,000
1.11.2	երկլեզու (օրինակ՝ հայերեն – ռուսերեն կամ հայերեն - անգլերեն)	5,000
1.11.3	Պարտավորությունների վերաբերյալ	1,000
1.12	Այլ տեղեկանքների տրամադրում	5,000
1.13	Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում	10,000
1.14	Ընթացիկ բանկային հաշիվների համար տարեկան տոկոսադրույք	0% (տարեկան տոկոսային եկամտաբերությունը հավասար է 0%)[7]
1.15	Բանկի կողմից լիազորագրի տրամադրում	3,000

2.	**ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ***	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ**
2.1	ՀՀ տարածքում փոխանցումներ՝ բանկային հաշվի միջոցով	

[7] **Ուշադրություն՝ Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:**

2.1.2	«ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդների միջև ՀՀ դրամով և արտարժույթով փոխանցումներ (ԱյԴի Բանկի համակարգում)	անվճար
2.1.3	ՀՀ դրամով փոխանցումներ այլ ՀՀ բանկեր	անվճար
2.1.4	ՀՀ դրամով շտապ փոխանցումներ այլ ՀՀ բանկեր[8]	0.1%, նվազագույնը 500, առավելագույնը 10,000
2.1.5	ԱՄՆ դոլարով և Եվրոյով փոխանցումներ այլ ՀՀ բանկեր[9]	
2.1.5.1	Վճարման հանձնարարականը թղթային ներկայացնելու դեպքում	0.12%,նվազագույնը՝ 2,000, առավելագույնը՝ 20,000
2.1.5.2	Վճարման հանձնարարականը Բանկ-Հաճախորդ/ IDBANKING համակարգի միջոցով ներկայացնելու դեպքում	0.1%,նվազագույնը՝ 1,500, առավելագույնը՝ 20,000
2.2	**ՀՀ տարածքում ՀՀ դրամով փոխանցումներ՝ առանց հաշվի առկայության**	
2.2.1	Մինչև 100 հազ. ՀՀ դրամ	
2.2.1.1	Իրավաբանական անձանց և ԱՁ-ների օգտին կատարվող փոխանցումների դեպքում	250
2.2.1.2	Ֆիզիկական անձանց օգտին կատարվող փոխանցումների դեպքում	100
2.2.2	100 հազ. ՀՀ դրամ և ավել	
2.2.2.1	Իրավաբանական անձանց և ԱՁ-ների օգտին կատարվող փոխանցումների դեպքում	500
2.2.2.2	Ֆիզիկական անձանց օգտին կատարվող փոխանցումների դեպքում	200
2.3	**Արտարժույթով փոխանցումներ[10]**	
2.3.1	**Փոխանցումներ բանկային հաշվի միջոցով**	
2.3.1.1	**ԱՄՆ դոլարով, Եվրոյով[11]**	

[8] ՀՀ դրամով «Շտապ» պայմանով փոխանցումները ՀՀ այլ բանկեր կատարվում են նույն բանկային օրը միայն մինչև 15:45-ը հանձնարարականը ներկայացնելու դեպքում համապատասխան միջնորդավճարի գանձման պարագայում:

[9] Արտասահմանյան միջնորդ բանկերի միջոցով ՀՀ այլ բանկեր ուղարկվող, ինչպես նաև այլ արտարժույթով փոխանցումներն իրականացվում են համաձայն 2.3 կետի:

[10] Բանկը՝ համաձայն Բանկում առկա տեղեկագրերի, կարող է ինքնուրույն, առանց հաճախորդի նախնական համաձայնության ընտրել միջոցների փոխանցման ճանապարհը /միջնորդ բանկին/ այն դեպքում, երբ փոխանցման ամբողջական ճանապարհը /միջնորդ բանկը/ նշված չէ հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականում:

[11] 500,000 ԱՄՆ դոլարը, 400,000 եվրոն/շվեյցարական ֆրանկը, 30.0 մլն ՌԴ ռուբլին, 350,000 անգլիական ֆունտ ստերլինգը, 50.0 մլն ճապոնական իենը, 1.0 մլն վրացական լարին և 500,000 ԱՄՆ դոլարին համարժեք (ՀՀ ԿԲ հաշվարկային դրույքով) այլ արժույթը գերազանցող փոխանցումների դեպքում (բացառությամբ Բանկում ներդրված ավանդի վերադարձման նպատակով կատարվող փոխանցումների) ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդներից գանձվում է 360,000 ՀՀ դրամ: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդների եվրոյով փոխանցումները կատարվում են միայն **OUR** կամ **BEN/SHA** տարբերակներով: ՌԴ ռուբլով և որոշ այլ արժույթներով փոխանցումների դեպքում փոխանցման հանձնարարականը պետք է պարունակի տվյալ երկրի օրենսդրությամբ պահանջվող կոդավորումը (առկայության դեպքում): Տվյալ բաժիններում նշված ծառայությունների սակագները ներառում են Բանկի թղթակից բանկերի միջնորդավճարները: Երրորդ բանկերի ծախսերը, առկայության դեպքում, գանձվում են հաճախորդից լրացուցիչ: Բանկը կարող է կասեցնել կամ մերժել փոխանցումը՝ գործարքին առնչվող

2.3.1.1.1	***OUR տարբերակով*** *Վճարման հանձնարարականի կատարման հետ կապված ծախսերը կրում է փոխանցող հաճախորդը*	0.15%, նվազագույնը՝ 7,000, առավելագույնը՝ 50,000
2.3.1.1.2	***OUR տարբերակով ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդների համար*** *Վճարման հանձնարարականի կատարման հետ կապված ծախսերը կրում է փոխանցող հաճախորդը*	0.3%, նվազագույնը՝ 30,000
2.3.1.1.3	***Guaranteed OUR տարբերակով*** *Այս տարբերակն ընտրելու դեպքում գումարը շահառուին կհասնի ամբողջությամբ*	
	ա)ԱՄՆ դոլարի դեպքում՝ ի հավելումն 2.3.1.1 կետի գանձվում է	12,000
	բ.մինչև 12,500 **եվրո** ներառյալ	12,000
	բ.12,500 **եվրո** գերազանցելու դեպքում	0.15%, նվազագույնը՝ 14,000, առավելագույնը՝ 50,000
2.3.1.1.4	**BEN/SHA *տարբերակով*** *Վճարման հանձնարարականի կատարման հետ կապված երրորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից*	5,000
2.3.1.2	**ՌԴ ռուբլով, լարիով**[10]	
2.3.1.2.1	*Կատարվում է միայն* **OUR տարբերակով**, *ընդ որում գումարը շահառուին կհասնի ամբողջությամբ*	0.1%, նվազագույնը՝ 3,000, առավելագույնը՝ 30,000
2.3.1.2.2	*ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում կատարվում է միայն* **OUR տարբերակով**, *ընդ որում գումարը շահառուին կհասնի ամբողջությամբ*	0.3%, նվազագույնը՝ 30,000
2.3.1.3	**Բանկի համար ընդունելի այլ արժույթով**[10]	
2.3.1.3.1	***OUR տարբերակով***	0.15%, նվազագույնը՝ 14,000, առավելագույնը՝ 60,000

անհրաժեշտ բավարար տեղեկություններ/փաստաթղթեր չներկայացնելու դեպքում, թղթակից բանկերի պահանջներից ելնելով, ՀՀ օրենսդրությամբ կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում:

	Վճարման հանձնարարականի կատարման հետ կապված ծախսերը կրում է փոխանցում կատարող հաճախորդը	
2.3.1.3.2	***OUR տարբերակով*** *ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց դեպքում Վճարման հանձնարարականի կատարման հետ կապված ծախսերը կրում է փոխանցում կատարող հաճախորդը*	0.3%, նվազագույնը՝ 30,000
2.3.2	Առանց բանկային հաշվի առկայության Բանկի կողմից արտարժույթով փոխանցումները կատարվում են բացառապես ՌԴ ռուբլով՝ համաձայն 2.3.1.2 կետի	
2.4	**Հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի հետ կանչման կամ վճարային վավերապայմանների փոփոխման հանձնարարականի կատարում, հարցումների իրականացում**[12]	
2.4.1	ՀՀ դրամով	1,000
2.4.2	ՌԴ ռուբլով, լարիով	10,000
2.4.3	Այլ արտարժույթով	
2.4.3.1	Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող վճարման հանձնարարականների դեպքում	30,000
2.4.3.2	1 տարուց ավել վաղեմություն ունեցող վճարման հանձնարարականների դեպքում	125,000
2.5	**Հաճախորդի կողմից թերի կամ սխալ ներկայացված տվյալների արդյունքում փոխանցման հետվերադարձ թղթակից բանկի կողմից**[11]	
2.5.1	ՀՀ դրամով	անվճար
2.5.2	ՌԴ ռուբլով, լարիով	10,000
2.5.3	Այլ արտարժույթով	20,000
2.6	**SWIFT հաղորդագրության կրկնօրինակի տրամադրում**	3,000
2.7	**Արտարժույթով ստացված չպարզաբանված գումարների վերադարձ՝ ներքին ակտերի համաձայն կամ ուղարկող բանկի պահանջով**	
2.7.1	ՌԴ ռուբլով	անվճար
2.7.2	Այլ արտարժույթով[13]	
2.7.2.1	Մինչև 500 ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթ	5,000
2.7.2.2	500 և ավելի ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթ	15,000

* Վճարման հանձնարարականների ընդունման և կատարման համար, բացառությամբ 2.1.22 կետի, սահմանվում է հետևյալ ժամանակացույցը

	Վճարման հանձնարարականների ընդունում և կատարում			
	Ընդունում	**Կատարում**	**Ընդունում**	**Կատարում**
ՀՀ դրամ	Մինչև ժամը 15:30	Նույն բանկային օրը	Ժամը 15:30-ից հետո	Հաջորդ բանկային օրը

[12]Տվյալ բաժիններում նշված ծառայությունների սակագները ներառում են Բանկի թղթակից բանկերի միջնորդավճարները: Բանկից անկախ պատճառներով հանձնարարականի կատարման արդյունքի անբավարարության դեպքում, վճարված միջնորդավճարի գումարը ենթակա չէ հետ վերադարձման:
[13] Գանձվում է վերադարձվող գումարից՝ համարժեք արժույթով:

ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը[14]
Այլ արժույթ	3 բանկային օրվա ընթացքում			

3	**ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		**ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ**
3.1	**Կանխիկ արտարժույթի առքուվաճառք, փոխանակում**	
3.1.1	Շրջանառության համար պիտանի դրամանիշների դեպքում	համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքի
3.1.2	500 եվրո անվանական արժեքով թղթադրամի առք	1%
3.1.3	ԱՄՆ դոլարի, եվրոյի, ՌԴ ռուբլու հնամաշ դրամանիշների դեպքում	3%
3.2	**Կանխիկ արտարժույթի հաշվում, իսկության ստուգում, մեկ այլ անվանական արժեքի դրամանիշի հետ փոխանակում**	
3.2.1	Մինչև 300 ԱՄՆ դոլարը կամ 300 եվրոն կամ 20,000 ՌԴ ռուբլին ներառյալ կամ 300 ԱՄՆ դոլարին համարժեք Բանկի համար ընդունելի այլ արտարժույթի դեպքում	անվճար
3.2.2	300 ԱՄՆ դոլարը կամ 300 եվրոն կամ 20,000 ՌԴ ռուբլին կամ 300 ԱՄՆ դոլարին համարժեք Բանկի համար ընդունելի այլ արտարժույթը գերազանցելու դեպքում	0.1%, նվազագույնը 1,000 առավելագույնը 100,000
3.3	**ՀՀ դրամի մետաղադրամների հաշվում, տրամադրում, փոխանակում, փաթեթավորում՝ Բանկի հաճախորդ չհանդիսացող ֆիզիկական անձանց համար[15]**	
3.3.1	Յուրաքանչյուր դրամանիշից մինչև 50-ական հատը	անվճար
3.3.2	Յուրաքանչյուր դրամանիշից 50 հատից ավելի դեպքում	Գումարի 1%,նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
3.4	**Կանխիկի տրամադրում Բանկի POS-տերմինալներով՝ ՀՀ-ից դուրս թողարկված քարտերի միջոցով**	Համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված սակագնի

[14] Մինչև 50,000 ԱՄՆ դոլարով և 50,000 եվրոյով փոխանցումների դեպքում, որոնց կատարման օրը թղթակից բանկի երկրում ոչ աշխատանքային է, փոխանցման արժութավորման ամսաթիվը /valuedate/ կտեղափոխվի հաջորդ բանկային օրը, իսկ 50,000 ԱՄՆ դոլարը, 50,000 Եվրոն գերազանցող և ՌԴ ռուբլով փոխանցումների դեպքում՝ փոխանցումը կկատարվի հաջորդ բանկային օրը:

[15] Տվյալ սակագինը չի գործում, այն դեպքում, երբ ծառայության մատուցումը հանգեցնում է «Գործառնական օր» ծրագրում մեկ այլ գործարքի ձևավորմանը:

4	ՓՈԽԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ
4.1	Ներբանկային փոխարկումներ	Ըստ պայմանագրի կամ Բանկի փոխարժեքի

5	ՀԵՌԱՎԱՐ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ
5.1	**IDBANKING համակարգի միացում**[16]	անվճար
5.1.1	Գործարքներ կատարելու իրավասության տրամադրում	անվճար

6	ՊԱՀԱՏԵՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ			
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ՍԱԿԱԳԻՆԸ[17] ՀՀ ԴՐԱՄ		
		Փոքր	**Միջին**	**Մեծ**
6.1	**Վարձակալության ժամկետ**	**Չափսը (սմ) 8.5x30x50**	**Չափսը (սմ) 17x30x50**	**Չափսը (սմ) 17x61x50**
6.1.1	Մինչև 7 օր (յուրաքանչյուր օրվա համար)	1,000	1,500	2,000
6.1.2	7 օր	3,000	5,000	7,000
6.1.3	8 -14 օր	5,000	7,000	10,000
6.1.4	15 - 30օր	7,000	12,000	17,000
6.1.5	31 – 90 օր	10,000	20,000	30,000
6.1.6	91 – 180 օր	15,000	25,000	32,000
6.1.7	181 – 270 օր	20,000	30,000	35,000
6.1.8	271 – 365օր	25,000	35,000	40,000
6.1.9	366 – 456օր	30,000	40,000	45,000
6.1.10	457 – 730 օր	40,000	45,000	50,000
6.1.11	Դեպոզիտար արկղի,տուփի, կողպեքի կամ կնիքի վնասման,բանալու կորուստի և	յուրաքանչյուր դեպքի համար 5,000-ական դրամ		

[16] Ծառայությունը տրամադրվում է միայն ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց: Բանկի հայեցողությամբ ծառայությունը կարող է տրամադրվել նաև ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց:

[17] *Ծառայությունը հասանելի է Բանկի «Վարդանանց», «Կենտրոն» «Բաղրամյան», «Գյումրի», «Արաբկիր», «Նոր Նորք» մասնաճյուղերում:* «Կենտրոն» մասնաճյուղում պահատեղերի չափսերը(սմ) կազմում են՝ փոքր՝ 6x25x35, միջին՝ 18.5x25x35, մեծ՝ 63,5x25x35: Պահատեղի վարձակալության համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթուղթ և Հանրային ծառայության համարանիշ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք:

	կրկնօրինակի տրամադրման դեպքում տույժ	
6.1.12	Պահատեղը չազատելու և բանալին չհանձնելու դեպքում տույժ[18]	Յուրաքանչյուր օրվա համար 1,000 դրամ

7	ՎԱՐԿԵՐԻ/ԳՐԱՎՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ[19]	
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ՍԱԿԱԳԻՆԸ ՀՀ ԴՐԱՄ(ներառյալ ԱԱՀ)
7.1	Գրավադրված անշարժ գույքի հասցեում ֆիզիկական անձի հաշվառման թույլտվության տրամադրում (անկախ հաշվառվողների քանակից)	Յուրաքանչյուր անգամ՝ 3,000
7.2	Գրավադրված գույքի սեփականության վկայականում փոփոխություններ կատարելու թույլտվության տրամադրում, բացառությամբ ժառանգության ճանաչման հետևանքով առաջացած փոփոխությունների	10,000
7.3	Գրավադրված անշարժ և շարժական գույքը վարձակալության հանձնելու թույլտվության տրամադրում	10,000
7.4	Գրավադրված ավտոմեքենայի հաշվառման համա-րանիշի փոփոխություն կատարելու թույլտվության տրամադրում	5,000
7.5	Գրավադրված գույքի մասնակի ազատման կամ գրավադրված գույքի փոփոխություն կատարելու թույլտվության տրամադրում (ֆիզիկական անձ հաճախորդների դեպքում, բացառությամբ ոսկու գրավով վարկերի վարկառուների)	10,000
7.5.1	Ոսկյա իրերի կամ ոսկու ստանդարտացված ձուլակտորների գրավով	անվճար
7.5.2	Դրամական միջոցների գրավով	
7.5.3	Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավով	
7.6	Գրավադրված գույքի վերաբերյալ գրությունների տրամադրում	Անշարժ գույքի դեպքում՝ 10,000
		Շարժական գույքի դեպքում՝ 5,000
7.7	Վարկի պայմանների վերանայում	1.

[18] 10-օրյա ժամկետում պահատեղը չազատելու դեպքում պահատեղը կարող է բացվել Բանկի հայեցողությամբ, այս դեպքում տուփը տեղափոխվում է դրամապահոց: Հետագա քայլերը կարգավորվում են համաձայն հաճախորդի հետ կնքված պայմանագրի:

[19] Սույն կետով սահմանված սակագներից շեղումները կատարվում են համապատասխան իրավասու մարմինների որոշումների համաձայն: Սահմանված սակագները չեն տարածվում այն հաճախորդների վրա, որոնք համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի համարվում են խնդրահարույց: 9.9 կետի 1) ենթակետով սահմանված սակագինը չի կիրառվում բանկային երաշխիքների և ակրեդիտիվների դեպքում:

		Ֆիզիկական անձանց դեպքում՝ 5,000 դրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Բանկը բացում և սպասարկում է ընթացիկ հաշիվներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով, բրիտանական ֆունտով, ճապոնական իենով, շվեյցարական ֆրանկով, վրացական լարիով, ԱՄԷ դիրհամով, չինական յուանով, բելառուսական ռուբլով, որոնք սույն փաստաթղթի իմաստով համարվում են Բանկի համար ընդունելի արժույթներ:
2. Ընթացիկ հաշիվը բացվում է անժամկետ:
3. Բանկային հաշիվների բացման, վարման և դրամարկղային սպասարկման վերաբերյալ կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրով:
4. Սույն տեղեկատվական ամփոփագրում չներառված պայմանները և սակագները կարգավորվում են առանձին տեղեկատվական ամփոփագրերով և/կամ պայմանագրերով/համաձայնագրերով:
5. Միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով, իսկ արտարժույթով սահմանված միջնորդավճարները՝ տվյալ գործարքի օրվա համար Բանկի կողմից սահմանած տվյալ արժույթի վաճառքի փոխարժեքով:
6. Միջնորդավճարները գանձվում են հաճախորդների Բանկային հաշիվներից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրերով/համաձայնագրերով:
7. ԱԱՀ-ով հարկվող միջնորդավճարները ներառում են նաև ԱԱՀ-ն:
8. Բանկը պատասխանատվություն չի կրում.

8.1. հաճախորդի կողմից սխալ ցուցումների արդյունքում առաջացած հետևանքների համար,

8.2. կապի միջոցների անսարքության դեպքում առաջացած հետևանքների համար,

8.3. անհաղթահարելի ուժ ունեցող (ֆորս-մաժոր) իրավիճակների դեպքում առաջացած հետևանքների համար:

9. Բանկը կարող է գործող սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ ինտերնետային կայքում առնվազն մեկ օր շուտ հասանելի դարձնելու միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ առանձին տեղեկատվական ամփոփագրերով և/կամ պայմանագրերով/համաձայնագրերով:
10. Ծառայությունների դադարեցման կամ ծառայությունից հրաժարվելու դեպքում մինչ այդ վճարված միջնորդավճարները վերադարձման ենթակա չեն:
11. Հաճախորդի հաշվից միջոցների դուրսգրումը կատարվում է ոչ ուշ, քան Հաճախորդի կողմից համապատասխան վճարման հանձնարարականը Բանկ ներկայացնելու հաջորդ բանկային օրը:
12. Հաճախորդի հաշվին ուղղված միջոցները մուտքագրվում են Հաճախորդի հաշվին, ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը:
13. Բանկային հաշվի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են գումարը մուտքագրելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
14. Հաճախորդի կողմից բանկային հաշվի փակման դիմում ներկայացնելու դեպքում այն փակվում է 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում: Հաշվում առկա դրամական միջոցները վերադարձվում են հաճախորդին նույն բանկային օրվա ընթացքում՝ հաճախորդի կողմից նախընտրած եղանակով:
15. Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացրած հայտի հիման վրա:
16. Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացրած հայտի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաշվից դրամական միջոցների բռնագանձման մասին Բանկը հաշվետիրոջը տեղեկացնում է հաշվի քաղվածքը ուղարկելու միջոցով, եթե հաճախորդը մինչ այդ չի դիմել բանկ և չի ստացել նշված տեղեկատվությունը:
17. Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առքուվաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հաճախորդների հեռավար սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) գործում է Բանկի պաշտոնական կայքում առկա արտարժույթի առքուվաճառքի փոխարժեքները:
18. Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքներ կատարելիս գործում են Բանկի կողմից սահմանված փոխարժեքները:
19. Բանկի և հաճախորդի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ Էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70-11-11 Ֆաքս՝ (+37410) 58-24-21, կամ դատական կարգով:
20. *Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:*

21. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

22. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

23. Բանկային հաշվի քաղվածքները տրամադրվում են հաճախորդին առնվազն երեսնօրյա պարբերականությամբ հաճախորդի նախընտրած տարբերակով.

- էլ. Փոստի միջոցով
- առձեռն Բանկի տարածքում
- փոստով:

24. Բանկը պարտավոր չէ հաշվետիրոջը հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

25. Բանկը պարտավոր է տրամադրել բանկային հաշվի առկայության, մնացորդի և շարժի վերաբերյալ և/կամ այլ տեղեկանքներ ոչ ուշ, քան Հաճախորդների կողմից համապատասխան դիմումը Բանկ ներկայացնելուն հաջորդող 5 բանկային օրվա ընթացքում, ընդ որում, հաշիվների մնացորդի և շարժի վերաբերյալ տեղեկանքը Բանկը տրամադրում է Հաճախորդին տեղեկանքի տրամադրման օրվան նախորդող օրերի համար կամ տրամադրման օրվա դրությամբ՝ նշելով տրամադրման կոնկրետ ժամը:

26. Հաշվի քաղվածքը ստանալուց 15-օրյա ժամկետում հաշվի հետ կապված գործառնություններում անճշտություններ հայտնաբերելու դեպքում հաճախորդը Բանկին կարող է ներկայացնել բողոքարկում: Նշված ժամանակահատվածում բողոքարկումները չստանալու դեպքում Բանկը քաղվածքը համարում է ընդունված: Բողոքարկումը ներկայացվում է Բանկին գրավոր դիմումի տեսքով: Սահմանված ժամկետում ստացված բողոքարկման դիմումը Բանկն ընդունում է կատարման՝ իրականացնելով տեղական և միջազգային վճարային համակարգի կանոններով սահմանված համապատասխան գործողությունները:

27. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ **Մասնաճյուղեր և Բանկոմատներ:**

28. Բանկի հեռահար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված **են** «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:

29. Բանկի և Հաշվետիրոջ միջև վարկային պարտավորությունների առկայության դեպքում Բանկային հաշվից դրամական միջոցները անակցեպտ գանձվում են վարկային պայմանագրով նախատեսված կարգով:

30. Հաշվում առկա միջոցների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

31. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել ընթացիկ հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող պարզ տոկոսադրույքի չափը՝ այն ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ հրապարակելով Բանկի պաշտոնական կայքում

32. Բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներկայացված է «Հաշիվների բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր ցանկում»:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ